Ես այն ժամանակ չէի կարողանում հասկանալ, թէ ինչո՛վ որսորդը կարող էր Կարոյին խելքից հանել: Որսորդը մեր դրացին էր եւ ամենալաւ դրացին, ես երեխայութիւնից ճանաչում էի նրան. նա մի այնպիսի մթին, լուռ, խորամիտ մարդ էր, որ հազիւ թէ կը բացուէր մէկի հետ, ուր մնաց Կարոյի նման անփորձ պատանու հետ: Նրանից անկարելի էր մի բան հասկանալ: Ես այսքանը միայն գիտէի, որ նա շատ բարի մարդ էր, թէեւ ուրիշները նրան վատ էին համարում, եւ մի այսպիսի բարի մարդը ոչ ոքին խելքից չէր հանի, ոչ ոքին չար ճանապարհի վրայ չէր տանի:

Ինքս էլ էի նկատում, որ Կարօն խիստ յաճախ անգամ գնում էր որսորդի խրճիթը, երբեմն ես էլ նրա հետ էի լինում, երբ օրը կիրակի էր եւ դպրոցից ազատ էի: Որսորդը տալիս էր մեզ վառօդ, որպէս երեխաներ, խաղ անելու համար. մենք նրանից շինում էինք ֆշանքներ եւ թռցնում էինք օդի մէջ. այդ մեծ զուարճութիւն էր պատճառում մեզ: Երբեմն իր հրացանն էր տալիս, մեզ վարժեցնում էր, թէ որպէս պէտք էր լցնել, որպէս պէտք էր արձակել, կամ որպէս պէտք էր նպատակին դիպցնել: — «սովորեցէք, ասում էր նա, մի օր ձեզ հարկաւոր կը լինի հրացանը»... Շատ անգամ Կարոյին տանում էր իր հետ որսի, երբ մօտ տեղ էր գնում, բայց ինձ ամենեւին չէր տանում, որովհետեւ ես շուտով յոգնում էի:

Ես սաստիկ սէր ունէի դէպի հրացան գործիքները. վառօդի խեղդող ծուխն անգամ ախորժ էր թւում ինձ: Բայց մենք այնքան աղքատ էինք, որ ես չէի կարող գնել երկաթից շինուած հրացան զէնքեր. ես այսպիսի զէնքերը ինքս էի պատրաստում եզան կամ ոչխարի ոտքերի ոսկորներից: Կտրելով ոսկորի մի ծայրը, եւ միւս ծայրում մի ծակ բաց անելով, իմ թոանքի խողովակն արդէն պատրաստ էր. յետոյ խիստ ճարտարութեամբ հագցնում էի նրան մի կտոր փայտի մէջ, որը ծառայում էր կոթի տեղ, եւ պինդ կապում էի թելով: Մինչեւ այսօր իմ աջ յօնքի ծայրին մնացել է փոքրիկ սպի, տեսնողը կմտածէ, թէ խենջալով ծակած են, բայց ոչ, իմ ոսկրեայ հրացանը երբ պայթեց, նա թողեց երեսիս վրայ այդ նշանը: Մայրս սաստիկ բարկացաւ, երբ պատահեց ինձ այդ վերքը: — «գրողը՛ տանէ քեզ, — ասաց նա, — դու վերջը վառօդով պիտի մեռնես»... եւ արգելեց զէնքերի հետ խաղալ: Այդ պատճառով, երբ իմ քեռի Մինասը ընծայեց ինձ մի փոքրիկ հրացան, ես մօրս երկիւղից մեր տունը չբերեցի, այլ ծածուկ պահում էի Կարօենց տանը, եւ գնում էի այնտեղ, միասին բանեցնում էինք:

Ես չեմ կարող ճշտութեամբ բացատրել, արդեօք ինչի՞ց էր, որ ես սիրում էի զէնքեր. արդեօք նրա համար, որ քեռիներիս արհեստանոցում միշտ զէնքեր էի տեսնում. արդեօք նրա համար, որ որսորդը միշտ հրապուրում էր